# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք, ՀՀ,
Լոռու մարզ, Գ.Գեղասար, Հեռ. 025560412 , 094041458 ,
geghasar.lori@mta.gov.am

N 23
*28 փետրվար 2017թ.*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից ուղարկվում է Գեղասար համայնքի ավագանու թիվ 6-Ա և 7-Ն որոշումները:

Առդիր՝4 թերթ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՏԱՍԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ս. Սերոբյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 025560412 , 094041458, geghasar.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2017թվականի N 6-Ա

### ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27.02.2017ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ մասով Գեղասար համայնքի ավագանին

որոշում է.

Հաստատել Գեղասար համայնքի 27.02.2017թվականի 4-րդ նիստի օրակարգը.

1. Գեղասար համայնքի 2016թվականի բյուջեի կատարման տարեկան և զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
3. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՎՐԵԺ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՏԱՍԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 025560412 , 094041458, geghasar.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2017թվականի N 7-Ն

### ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Գեղասար համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Գեղասար համայնքի 2016թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Հաստատել 2016թվականի Գեղասար համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
3. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՎՐԵԺ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՏԱՍԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Հավելված
Գեղասար համայնքի ավագանու
2017թվականի փետրվարի 27-ի, թիվ 7-Ն որոշումից

# ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նիստին մասնակցում էին ավագանու հինգ անդամներից չորսը :
Նիստին մասնակցում էին ՀՀ Լոռու մարզի Գեղասար համայնքի միջնակարգ դպրոցի տնօրեն՝ Վ.Ղուկասյանը և համայնքի մի շարք բնակիչներ:
Գեղասարի համայնքապետարանը հաշվետու ժամանակաշրջանում կատարել է իր առջև դրված պարտականությունների մի մասը :
2016թվականին կատարել է եկամուտներ՝ նախատեսված՝ 20.473.300դրամի փոխարեն , փաստացի կատարվել է 20.898.500դրամի , 103%-ով:
2016թվականին բերքատվությունը կազմել է՝
Կարտոֆիլ - 4000g, հացահատիկ - 5360g, բանջարեղեն - 300g, պտուղ և հատապտուղ - 2g, բնական խոտ - 6000g, ծղոտ - 3500g:
1.Համայնքի սոցիալ – տնտեսական վիճակի բարելավում
ա).Դրամական օգնություն է ցուցաբերել Գեղասար համայնքի նորածին երեխա ունեցող և սոցիալապես անապահով ընտանիքներին:
բ).Աշխատանքներ են տարվել գյուղատնտեսության և անասնապահության զարգացման համար:
Համայնքի ղեկավարը նշեց նաև որ չնայած համայնքում չկա խոտհնձի և հացահատիկային կոմբայիններ, սակայն մեծ դժվարությամբ ուրիշ համայնքներից բերվում է հացահատիկի և խոտհնձի կոմբայիններ,
կատարվում է հունձը ,որի պատճառով բարձրանում է մեկ հեկտարի ինքնարժեքը:
Ոռոգման սեզոնին ժամանակին կազմակերպվել է ոռոգման աշխատանքները:
Համայնքի ղեկավարի հսկողությամբ կատարվել է անասունների ճիշտ և ժամանակին նախատեսված պատվաստումներ, համաճարակի տարածումը կանխելու նպատակով:
գ). Համայնքի հողի սնուցման համար բնակիչներին Կառավարության կողմից 6000դրամ արժողությամբ ապահովվել է ազոտական պարարտանյութերով, ցանկացողներին տրամադրվել է գարու, կորընգանի, առվույտի սերմնացուներ մատչելի գներով :Անվճար կարգով տրվել է վնասատուներից և կրծողներից ազատվելու մկնդեղ:
2. Համայնքի սոցիալ – կենցաղային պայմանների բարելավում.
ա) Աշխատանքներ են տարվել համայնքը խմելու ջրով ապահովելու ուղղությամբ: Ինչպես միշտ այնպես էլ 2016թվականին խմելու ջրի խնդիրը մնում է առաջնային տեղում , որը թերևս թերի է , սակայն աշխատանքներ են տարվում խմելու ջուրը բնակիչներին լիարժեք ապահովելու ուղղությամբ:

բ) Համայնքի ծայրամասերը գազաֆիկացնելու համար կազմվել է նախագիծ, որից 300գծմ արդեն իրականացվել է ֆինանսավորվել է գյուղապետարանի և համայնքի բնակիչների կողմից իսկ մնացած 700գծամետրի համար աշխատանքներ են տարվում ֆինանսական աղբյուր գտնելու գործում:
գ) Գյուղամիջյան ճանապարհները ձմռանը սիստեմատիկ մաքրվել են ձնածածկույթից : Ինչպես ամեն տարի այնպես էլ 2016թվականին ճանապարհները նորից վերանորոգվել են , կատարվել է ճանապարհների խճապատում , հարթեցում ,սակայն անձրևների պատճառով ճանապարհները դարձել են նորից անանցանելի, որը գտնվում է նաև համայնքի ղեկավարի ուշադրության կենտրոնում:
3.Համայնքի կուլտուր- կենցաղային պայմանների բարելավում :
ա) Մեծ ուշադրություն է դարձվում երիտասարդների առօրյան հետաքրքիր դարձնելու համար , առանձնակի ուշադրություն է դարձնում հիշատակի օրերի , տոնակատարությունների՝ կանանց տոնի, հաղթանակի օրվա , ամանորյա միջոցառումներ կազմակերպելու և նվերներ տրամադրելու գործում:
4. Համայնքի ղեկավարը նշեց նաև Գեղասար համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման 2016-2021թթ հնգամյա ծրագրով նախատեսված հետագա անելիքների հրատապ խնդիրների և իրականացված աշխատանքների մասին: Այն աշխատանքները որոնք իր կողմից չի հասցվել կատարվել 2016թվականին , նա խոստացավ այն իրագործել 2017թվականին :
Ավարտելով ելույթը համայնքի ղեկավարը նշեց , որ իր պարտքն է համարում , հաղթահարել և իրականացնել Գեղասար համայնքում ծագած բոլոր խնդիրները , պատրաստ է հայրենասիրությամբ պաշտպանել իր գյուղը , բարեկեցիկ դարձնել յուրաքանչյուր Գեղասարցու ապագան և օգտվելով առիթից շնորհակալություն հայտնեց իր համայնքի բնակիչներին , վստահության և համախմբվածության համար:

Իրենց ելույթներով հանդես եկան նաև Գեղասար համայնքի միջնակարգ դպրոցի տնօրեն՝ Վ. Ղուկասյանը և համայնքի ավագանու անդամ՝ Վ.Սիմոնյանը

Վ.Ղուկասյան - նշելով որ բարդ է համայնքի ղեկավարի աշխատանքը սակայն հաղթահարելով բոլոր դժվարությունները համայնքի ղեկավարը կարողանում է կարդալ համայնքի բնակիչների մտքերը և կարեկցել նրանց: Նրա հոգատարության և կատարած աշխատանքների շնորհիվ բնակիչները իրենց սատարված են զգում, նրա կողքին:

Վ.Սիմոնյանը - նշելով որ համայնքի ղեկավարը իր ընտրված և վերընտրված ժամանակաշրջաններում կարողացել է բարեփոխել Գեղասար համայնքը , ստեղծելով բնակիչների համար բարենպաստ պայմաններ: Իր կատարած աշխատանքների շնորհիվ հասցրել է հարգված և սիրված լինել համայնքի բոլոր բնակիչների կողմից:

ԳԵՂԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՏԱՍԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ